## Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 25 | Փետրվար | 2019 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 25 | Փետրվար | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 8684942193 |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

### Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 3 4 4 8 |
| [9] Անվանումը | «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 3 4 4 8 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ ՓԲԸ — N 11500166513800 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

### Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 5 8 9 1 2 8 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ Ֆն գործառնական վարչություն — N 900011474286 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՎԱՂԱՐՇՅԱՆ 13Ա |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (մատակարարման քանակը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 37200418 դատահոգեբանական փորձաքննություն | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

25/02/2019 15:59:02

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
### *դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին*

29 նոյեմբերի 2018թ. ք.Եղեգնաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, առաջին դասի խորհրդական Ա. Հարությունյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 37200418 քրեական գործի նյութերը,

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի օգոստոսի 20-ին Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակիչ Հակոբ Հովհաննեսի Իսրայելյանը ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի պետին դիմում է հասցեագրել այն մասին, որ անհայտ անձինք նույն բնակավայրում գտնվող իր առանձնատնից գողացել են 300.000 ՀՀ դրամ գումար:

Դիմումի կապակցությամբ նախապատրաստված նյութերով տեղեկություններ են ստացվել այն մասին, որ 2018 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 09.30-ից 17-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը ապօրինի մուտք է գործել Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրում գտնվող, Հակոբ Իսրայելյանին պատկանող առանձնատուն և ննջասենյակի սեղանի վրայից վրա գաղտնի հափշտակել 300.000 ՀՀ դրամ:

Հակոբ Իսրայելյանի առանձնատնից զգալի չափերով գողություն կատարելու դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում նախապատրաստվող նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով Վայոց ձորի մարզի դատախազությունում 31.08.2018թ. հարուցվել է թիվ 37200418 քրեական գործը, որը 04.09.2018թ. ուղարկվել է ՀՀ ՔԿ Վայոց ձորի մարզային քննչական վարչություն:

Նախաքննության ընթացքում կազմվել է քննության պլան, առաջ են քաշվել մի շարք վարկածներ, որոնք ստուգելու նպատակով կատարվել են մի շարք քննչական և դատավարական գործողություններ, այդ թվում՝ հարցաքննվել են վկաներ Դավիթ Գառնիկի Կարապետյանը, Հայկ Հակոբի Բաբայանը, Հրաչուհի Վաչեի Իսրայելյանը, Գագիկ Բախշիի Քարամյանը, Նազիկ Դերենիկի Միքայելյանը, Վահագն Վոլոդյայի Մարգարյանը, Արթուր Վարդանի Վարդանյանը և մի շարք այլ վկաներ, կատարվել է դեպքի վայրի զննություն, գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանման նպատակով հետաքննության մարմնին տրվել է հանձնարարություն, կատարվել են այլ քննչական և դատավարական գործողություններ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ հանցագործության մասին հաղորդում տված Հակոբ Հովհաննեսի Իսրայելյանը 18.03.1986թ.-ից «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հոգեբուժական կաբինետում գտնվում է հաշվառման մեջ «Օրգանական շիզոֆրենանման խանգարում» ախտորոշմամբ:

Հակոբ Իսրայելյանը, նախազգուշացված լինելով սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին, դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում ներկայացրած դիմումով, տված բացատրությամբ և քրեական գործի նախաքննության ընթացքում տված ցուցմունքով հայտնել է, որ իր առանձնատնից 300.000 ՀՀ դրամ գումարի գողությունը կատարել է ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի աշխատակից Արթուր Վարդանյանը, որպիսի հանգամանքը նախաքննության ընթացքում չի հաստատվել, ավելին՝ նախաքննությամբ ձեռք են բերվել հիմնավոր տվյալներ մինչև դեպքը Հակոբ Իսրայելյանի և նրա հետ համատեղ բնակվող մոր՝ Հրաչուհի Իսրայելյանի վատ գույքային դրություն ունենալու, կոմունալ ծախսերի, գյուղում գտնվող առևտրային խանութներից գնված ապրանքների դիմաց բազմաթիվ պարտքեր ունենալու, Հակոբ Իսրայելյանի կողմից դեպքի ժամանակահատվածի վերաբերյալ հակասական տվյալներ ներկայացնելու մասին, որպիսի հանգամանքը հիմք է տալիս վարույթն իրականացնող մարմնին կասկածի տակ դնելու գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակության առկայությունը:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել Հակոբ Իսրայելյանի նկատմամբ նշանակել դատահոգեբանական փորձաքննություն՝ պարզելու համար, թե արդյոք նա կարող է ճիշտ ընկալել և վերարտադրել դեպքերն ու իրադարձությունները և դրանց վերաբերյալ տալ արժանահավատ ցուցմունքներ և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր:

Նկատի ունենալով, որ նշված փորձաքննության կատարման համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր.դատ. օր-ի 55-րդ, 243-244-րդ և 248-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇԵՑԻ՝

1. Սույն քրեական գործով նշանակել դատահոգեբանական փորձաքննություն:
2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել ներքոհիշյալ հարցերը.

ա) Հաշվի առնելով տուժող Հակոբ Իսրայելյանի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, նրա հոգեկան վիճակը՝ կարո՞ղ է նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ վերարտադրել դրանք ու քրեական գործով տալ ճշմարտացի ցուցմունքներ, թե՝ ոչ:

բ) Տուժող Հակոբ Իսրայելյանին բնորո՞շ է արդյոք վառ երևակայությունը:

2. Փորձաքննությանը կատարման համար ապահովել տուժող Հակոբ Իսրայելյանի ներկայությունը:

3. Անհրաժեշտության դեպքում փորձագետի ուսումնասիրության տակ դնել սույն քրեական գործի նյութերը:

4. Փոձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության կատարման ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և դրանց պարզաբանումը կարևոր նշանակություն կունենա փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

***Վայոց ձորի մարզային քննչական***
***վարչության ՀԿԳ քննիչ՝*** ***Ա. Հարությունյան***